«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/58

ք. Երևան «25» 05 2021թ.

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը, ի դեմս ռեկտոր՝ Վ. Ուռուտյանի, ով գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մարզանդ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Յ. Մարգարյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ընդհանուր շինարարական աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 100 օրացուցային օրվա ընթացքում:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3.4.12 Պայմանագիրը կատարելու ժամանակ, պայմանագրի գնի ավելի քան 50 տոկոսը՝ հանրագումարային ձևով, ուղղել հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և (կամ) արտադրական ռեսուրսների օգտագործման միջոցով պայմանագրի կատարմանը, օգտագործելով սույն պայմանագրի հավելված N 1.1 ով սահմանված ռեսուրսները:

3.4.13 Պայմանագրի կատարման շրջանակում յուրաքանչյուր փուլի հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ պատվիրատուին ներկայացնել տվյալ փուլի կատարումն ապահովելու նպատակով օգտագործված հայաստանյան ծագում ունեցող արտադրական ռեսուրսների ծագման երկրի սերտիֆիկատների և ռեսուրսների

համապատասխան թվով աշխատողներին վճարված գումարների մասին, նշելով ըստ աշխատողների վճարված գումարների չափերը և վերջիններիս հանրային ծառայության համարանիշները:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 8400000 (ութ միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ (Կապալառուի հավաստմամբ վերջինս չի հանդիսանում ԱԱՀ վճարող): Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում: Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված պայմանագրի դեպքում տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԼՐԱՅՈՒՆԴԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ	«Մարզանդ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Տերյան 74	ՀՀ, Արագածոտնի մարզ, գ. Գեղաձոր
«Արդշինբանկ» ՓԲԸ	«Ակբա Բանկ» ԲԲԸ
Հ/Հ 247010053103	Հ/Հ 220423330079000
ՀՎՀՀ 01507028	ՀՎՀՀ 05012047
Ռեկտոր՝ ---------- Վ. Ուռուտյան	Տնօրեն՝ ---------- Յ. Մարգարյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
«25» 05 2021թ. կնքված
ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/58 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ «ԶԱՐԹՈՆՔ» ՀԱՆԳՍՏՅԱՆ ՏԱՆ 4-ՐԴ ԵՎ 5-ՐԴ ՀԱՐԿԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավորը	Քանակը	Ընդամենը նհազ. դրամ	Բաժնի կշիռը
1	2	3	4	5	6
	Քանդման աշխատանքներ			1326.418	15,83
1.	Մանրահատակի քանդում	$Մ^2$	182.0	72.8	
2.	Խեցեսալից հատակների քանդում	$Մ^2$	30.50	15.25	
3.	Հատակի ցեմենտ-ավազային շերտի քանդում 40մմ հաստության	$Մ^2$	212.50	106.25	
4.	Խամքարաբետոնե շերտի քանդում 60մմ հաստության	$Մ^3$	12.75	127.5	
5.	Բետոնե շերտի քանդում խեցեսալե հատակի հետ միասին 100մմ հաստության	$Մ^3$	9.15	91.5	
6.	Փայտե շրիշակների քանդում	գմ	131.38	13.138	
7.	Հախճասալի քանդում պատերից	$Մ^2$	35.1	17.55	
8.	Հախճասալի տակի սվաղի քանդում պատերից	$Մ^2$	35.1	14.04	
9.	Գաջի սվաղի քանդում պատերից	$Մ^2$	403.30	120.99	
10.	Միջնորմների քանդում 100մմ հաստության	$Մ^2$	181.0	72.4	
11.	Բետոնե սնամեջ բլոկներով պատերի քանդում 200-300մմ հաստության	$Մ^3$	4.5	67.5	
12.	Գաջի սվաղի քանդում առաստաղներից	$Մ^2$	79.0	23.7	
13.	Փայտյա պատուհանների ապամոնտաժում, պատուհանագոգով	$Մ^2$	12.5	7.5	
14.	Փայտյա դռների ապամոնտաժում	$Մ^2$	57.3	57.3	
15.	Շին. Աղբի հավաքում, բարձում ինքնաթափերի վրա և տեղափոխում 6կմ	տ	173.0	519	
	Կառուցողական աշխատանքներ **Միջնորմներ**			875.014	10,61
1.	Միջնորմների կառուցում թեթևաբետոնե բլոկներից 10սմ հաստությամբ	$Մ^2$	230.0	345	
2.	Անցքերի շաղափում ∅ 12մմ, L=100 մմ	հատ	280	140	
3.	Անցքերի ներարկում պոլիմերցեմենտային շաղախով	$Մ^3$	0.004	0.18	
4.	Բլոկների դատարկությունների լցում B7.5 դասի թեթև բետոնով	$Մ^3$	3.6	180	
5.	Միջնորմների շարվածքի ամրանավորում	տ	0.272	122.4	
6.	Ամրան ∅ 10A500C	տ	0.175	21	
7.	Ամրան ∅ 6AIc	տ	0.097	19.4	
8.	Ե/բ միաձույլ բարավորի պատրաստում B15 դասի բետոնից/ b=10սմ/	$Մ^3$	0.36	43.2	
9.	Ամրան ∅ 12A500C	տ	0.0168	3.024	
10.	Ամրան ∅ 6AIc	տ	0.0054	0.81	
	Պատուհաններ			454.735	5,37

1.	Մետաղապլաստե երկշերտ ապակեպատ 4+4մմ պատուհանների տեղադրում/ ներառյալ ապակեփաթեթը, բռնակ փակիչը, սարքերը, ներկումը/ բացվող	Մ²	14.40	360	
2.	Բարդ փականի և սովորականի գնային տարբերությունը	հատ	12	24	
3.	Միջատապաշտպան ցանց	Մ²	12.73	19.095	
4.	Պատուհանագոգերի տեղադրում	Մ²	10.22	20.44	
5.	Պլաստմասե պատուհանագոգեր b=40 սմ	գմ	10.4	31.2	
	Դռներ			522.25	
1.	Մետաղոպլաստե բլոկով դռների տեղադրում 60 մմ հաստ. Ապակեփաթեթով 4+4մմ, սպիտակ գույն/ ներառյալ սարքերը, կողպեքները, ներկումը ապակեպատումը/	Մ²	17.00	450.5	6,47
2.	Մետաղոպլաստե բլոկով երկփեղկ դռների տեղադրում 60 մմ հաստ. Ապակեփաթեթով 4+4մմ, սպիտակ գույն/ ներառյալ սարքերը, կողպեքները, ներկումը ապակեպատումը/	Մ²	2.87	71.75	
	Հատակներ			365.19	
1.	Հարթեցնող շերտի պատրաստում ցեմենտ-ավազային շաղախից 35մմ հաստությամբ /հատակների տակ/	Մ²	180.00	162	
2.	Հատակների ջրամեկուսացում մեկ շերտ իզոգամով 3մմ հաստ.	Մ²	32.50	16.25	4,33
3.	Հարթեցնող շերտի պատրաստում ցեմենտ – ավազային շաղախից 20մմ հաստությամբ	Մ²	32.50	16.25	
4.	Հարթեցնող շերտի պատրաստում ցեմենտ – ավազային շաղախից 30մմ հաստությամբ/հատակների տակ/	Մ²	32.50	32.5	
5.	Նախաշերտի իրականացում խարամաբետոնից 50 մմ հաստությամբ	Մ³	10.63	138.19	
	Ներքին հարդարում			1513.71	
1.	Պատերի գաջե սվաղում բարելավված որակի	Մ²	740.2	1110.3	18,17
2.	Պատերի սվաղ ցեմենտ-ավազային շաղախով	Մ²	195.3	332.01	
3.	Առաստաղի գաջե սվաղում բարելավված որակի	Մ²	42.00	71.4	
	Բաց պատշգամբ			312.93	
1.	Հարթեցնող շերտի պատրաստում ցեմենտ-ավազային շաղախից 20 մմ հաստությամբ	Մ²	183.00	164.7	3,72
2.	Հատակների ջրամեկուսացում մեկ շերտ իզոգամով 3մմ հաստ	Մ²	91.50	128.1	
3.	Նախաշերտի իրականացում խարամաբետոնից 40 մմ հաստությամբ	Մ³	3.66	20.13	
	N1-2 Ջրամատակարարման ցանց			254.5	
1.	Խողավակաշարի անցկացում պոլիպրոպիլենային խողավակներից ∅ 20x1.9մմ հիդրավլիկ փորձարկումով	գմ	138	82.8	
2.	Խողավակաշարի անցկացում պոլիպրոպիլենային խողավակներից ∅ 25x2.3մմ հիդրավլիկ փորձարկումով	գմ	12	4.8	3,17
3.	Փականներ ∅15մմ	հատ	20	30	
4.	Փականներ ∅ 20մմ	հատ	12	14.4	
5.	Ֆիտինգներ /տարբեր/	հատ	70	70	
6.	Պողպատե խողովակների սպասարկումը ∅15-20մմ	գմ	105	52.5	

1.	Խողովակաշարի անցկացում կոյուղու պոլիվինիլքլորիդային խողովակներից ∅100 մմ, հիդրավլիկ փորձարկումով	գմ	63	81.9	
2.	Խողովակաշարի անցկացում կոյուղու պոլիվինիլքլորիդային խողովակներից ∅50 մմ, հիդրավլիկ փորձարկումով	գմ	45	58.5	
	<u>Ձևավոր մասեր պոլիվինիլքլորիդային խողովակների համար</u>				
1.	Ստուգիչ ∅100 մմ	հատ	9	31.5	
2.	Քառաբաշխիչ 90⁰ ∅100x100մմ	հատ	5	17.5	
3.	Անցում ∅100x50մմ	հատ	12	6	
4.	Եռաբաշխիչ 90⁰ ∅50x50 մմ	հատ	7	3.5	
5.	Եռաբաշխիչ 90⁰ ∅100x100 մմ	հատ	18	7.2	
6.	Անկյունակ 90⁰ ∅50 մմ	հատ	17	6.8	
7.	Անկյունակ 90⁰ ∅100 մմ	հատ	3	1.8	
	<u>Ապամոնտաժման աշխատանքներ</u>			73.5	
1.	Թուջե խողովակների ապամոնտաժում ∅ 50-100 մմ	գմ	70	14	0,88
2.	Զուգարանակոնքերի ապամոնտաժում	հատ	7	14	
3.	Լվացարանների ապամոնտաժում	հատ	7	14	
4.	Անցքերի բացում ծածկերում ∅300մմ	հատ	9	31.5	
	<u>N1-4 Ջեռուցում</u>			1009.5	
1.	Ջեռուցման ալյումինե մարտկոցների տեղադրում	էքմ	38.75	108.5	
2.	Ջեռուցման ալյումինե մարտկոցների արժեքը H=500 մմ	սեկցիա	155	589	
3.	Խողովակաշարերի անցկացում պոլիպրոպիլենային ալյումինե շերտով խողովակներից ∅25x4.2մմ հիդրավլիկ փորձարկումով	գմ	8	12	
4.	Խողովակաշարերի անցկացում պոլիպրոպիլենային ալյումինե շերտով խողովակներից ∅20x3,4 մմ հիդրավլիկ փորձարկումով	գմ	42	84	11,49
5.	Ջերմակարգավորիչ փականներ	հատ	14	21	
6.	Պոլիպրոպիլենային փականներ ∅15 մմ	հատ	14	21	
7.	Պոլիպրոպիլենային փականներ ∅20 մմ	հատ	4	8	
8.	Ջեռուցիչ սարքերի կեռեր	հատ	35	28	
9.	Ջեռուցման խողովակների ամրացման կլիպսեր ö 20 - ö 25մմ	հատ	35	35	
10.	Օդահեռացման փականներ	հատ	14	28	
11.	Ֆիտինգներ և ձևավոր մասեր/տարբեր/	հատ	26	26	
12.	Ջեռուցման թուջե մարտկոցների ապամոնտաժում	սարք	10	15	
13.	Խողովակների ապամոնտաժում	գմ	34	34	
	<u>N1-5 Օդափոխություն</u>			52.6	
1.	Առաստաղային օդամուղ N=0.02կվտ/ժ	հատ	11	33	0,61
2.	Օդատարի անցկացում ցինկապատ թիթեղից ∅125մմ	Մ²	1.4	19.6	
	<u>N1-6 էլեկտրամատակարարում և էլեկտրալուսավորություն</u>			1210.7	
1.	Պլաստմասե բաշխիչ վահանի տեղադրում 24 մոդուլի	հատ	1	7	
2.	Պլաստմասե բաշխիչ վահանի տեղադրում 12 մոդուլի	հատ	2	14	13,77
3.	Պլաստմասե բաշխիչ վահանի տեղադրում 8 մոդուլի	հատ	7	42	
4.	Ավտոմատ անջատիչ եռաֆազ 50 Ա C-տիպի	հատ	1	5	
5	Ավտոմատ անջատիչ միաֆազ 40 Ա C-տիպի	հատ	9	36	

7.	Ավտոմատ անջատիչ միաֆազ 16 Ա C-տիպի	հատ	32	96	
8.	Ավտոմատ անջատիչ միաֆազ 10 Ա C-տիպի	հատ	11	33	
9.	Պաշտպանիչ սարք միաֆազ УЗО-16	հատ	11	22	
10.	Եռաֆազ սանր- 5 մոդուլի համար	հատ	5	25	
11.	Միաֆազ սանր- 60 մոդուլի համար	հատ	60	180	
12.	ПВ-3-0.66 5x10մմ² հատվածքով, պղնձե ջիղերով հաղորդալարի անցկացում	գմ	50	15	
13.	ПВ-3-0.66 3x6մմ² հատվածքով, պղնձե ջիղերով հաղորդալարի անցկացում	գմ	465	93	
14.	ПВ-3-0.66 3x2.5մմ² հատվածքով, պղնձե ջիղերով հաղորդալարի անցկացում	գմ	1350	270	
15.	ПВ-3-0.66 3x1.5մմ² հատվածքով, պղնձե ջիղերով հաղորդալարի անցկացում	գմ	1155	231	
16.	Տուփեր անջատիչների և վարդակների տեղադրման համար	հատ	156	31.2	
17.	Տուփեր ճյուղավորման	հատ	22	4.4	
18.	Վարդակների, անջատիչների, միացման տուփերի տեղերի փորում	հատ	178	35.6	
19.	Պլաստմասե ծալքավոր խողովակ ∅ 15 մմ	գմ	345	34.5	
	Ապամոնտաժման աշխատանքներ			6.25	
1.	Լուսատուների ապամոնտաժում	հատ	10	3	0,08
2.	Վարդակների ապամոնտաժում	հատ	25	3.25	
	Սարքավորումներ	-		44	
	N1-5 Օդափոխություն			44	
1.	Առաստաղային օդամուղ N=0.002 կվտ/ժ	հատ	11	44	
	N1-6 էլեկտրամատակարարում և էլեկտրալուսավորություն			164.003	
1.	Ավտոմատ անջատիչ եռաֆազ 50 Ա C-տիպի	հատ	1	2.003	2,42
2.	Ավտոմատ անջատիչ միաֆազ 40 Ա C-տիպի	հատ	9	27	
3.	Ավտոմատ անջատիչ միաֆազ 32 Ա C-տիպի	հատ	9	27	
4.	Ավտոմատ անջատիչ միաֆազ 16 Ա C-տիպի	հատ	32	64	
5.	Ավտոմատ անջատիչ միաֆազ 10 Ա C-տիպի	հատ	11	22	
6.	Պաշտպանիչ սարք միաֆազ УЗО-16	հատ	11	22	
	Ընդամենը /տոկոս/				**100**
	Ընդհանուր /ՀՀ դրամ/*			**8400**	

*Արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ ԱԱՀ-ն՝20%

** Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Աղավնաձոր հասցեում:

***Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ բոլոր նյութերը, գործիքները, տրանսպորտային միջոցները ապահովում է կապալառուն իր միջոցներով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան, Տերյան 74
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ 247010053103
ՀՎՀՀ 01507028

Ռեկտոր ---------- Վ. Ուռուտյան

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Մարզանդ» ՍՊԸ
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ. Գեղաձոր
«Ակբա Բանկ» ԲԲԸ
Հ/Հ 220423330079000
ՀՎՀՀ 05012047

Տնօրեն՝ ---------- Յ. Մարգարյան

Հավելված թիվ 2
«25» 05 2021թ. կնքված
ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/58 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ «ԶԱՐԹՈՆՔ» ՀԱՆԳՍՏՅԱՆ ՏԱՆ 4-ՐԴ ԵՎ 5-ՐԴ ՀԱՐԿԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Ընդհանուր շինարարական աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 100 օրացույցային օրվա ընթացքում
ԸՆԴԱՄԵՆԸ		Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 100 օրացույցային օրվա ընթացքում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան, Տերյան 74
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 247010053103
ՀՎՀՀ 01507028

Ռեկտոր՝ ---------- Ա. Ուռուտյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Մարզանդ» ՍՊԸ
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ. Գեղաձոր
«Ակբա Բանկ» ԲԲԸ
Հ/Հ 220423330079000
ՀՎՀՀ 05012047

Տնօրեն՝ ---------- Յ. Մարգարյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«25» 05 2021թ. կնքված
ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/58 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
Հ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45461100/3	Ընդհանուր շինարարական աշխատանքներ	-	-	-	-	-	8400000	8400000	8400000	8400000	8400000	8400000	8400000	**8400000**

Ծանոթություն. Գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են ՀԱԱՀ հիմնադրամի հրապարակած փոփոխված և լրացված գնման պլանի համապատասխան անվանատողերով:
Վճարումը կիրականացվի ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 30.12.2021թ.:
*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով և տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն անհրաժեշտ է նշել կոնկրետ գումարի չափ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան, Տերյան 74
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 247010053103
ՀՎՀՀ 01507028

Ռեկտոր՝ ---------- Վ. Ուռուտյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Մարզանդ» ՍՊԸ
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ. Գեղաձոր
«Ակբա Բանկ» ԲԲԸ
Հ/Հ 220423330079000
ՀՎՀՀ 05012047

Տնօրեն՝ ---------- Յ. Մարգարյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
«25» _____05_____ 2021թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների						Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«25» 05 2021թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____
-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն